ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ

т. XXII, № 10, 1969

Ա. Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

ԴԻԼԻՋԱՆԻ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՄԻ ՔԱՆԻ ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Դիլիջանը մեր հանրապետությունում հայտնի է ոչ միայն իր գեղատեսիլ անտառներով, կենարար օդով ու բուժիչ հանքային ջրերով, այլև մի շարք կարևոր դեղաբույսերով։ Բուժման այս միջոցները, որ սերտորեն կապված են մարդկության հնագույն պատմության հետ, մինչև օրս էլ ոչ միայն չեն կորցրել իրենց դերն ու նշանակությունը, այլև տարեցտարի դրսևորելով իրենց նորանոր հատկանիշները, էլ ավելի են ամրապնդվում դեղագործության մեջ։ Օրինակ, շատ մեծ հետաքրքրություն է ներկայացնում իմանին անտիբիոտիկի ստացումը սրոհունդից, պրոգեստերոն և կորտիզոն հորմոնալ պատրաստուկների ստացումը թռչնային մորմից, գանգլիոբլոկիրող սֆերոֆիզինի ստացումը համանուն բույսից և այլն։

Վերջին տասնամյակներում լայն չափերով թողարկվող անտիբիոտիկ, սուլֆանիլամիդ և այլ տեսակի նորանոր դեղանյութերը ոչ միայն իրենց հետ բերել են հին հիվանդությունների հաղթահարման մեծ հնարավորություններ, այլև նոր հիվանդությունների (կանդիդոմիկոզ, ալերգոպաթիա, իմունոգենեզի ճնշում և այլն) առաջացում, որոնք նոր որակ են մտցնում օրգանիզմի ախտաբանության ասպարեզում։ Հին և նոր անտիբիոտիկների անխոհեմ և ոչ չափավորված կիրառումների բարդությունների մասին են խոսում բազմաթիվ հայրենական [3, 4, 6, 13 և ուրիշ.] և արտասահմանյան գիտնականներ [17, 18 և ուրիշ.]։ Պետք է ընդունելի համարել Ն. Սևերովայի [12] արտահայտած այն միտքը, որ մարմնի սառեցման հետ կապված հիվանդությունները ցանկալի է բուժել այնպիսի բնական դեղամիջոցներով, ինչպիսիք են լորենու ծաղիկը, ալնվամորին, մեղրը և այլն։ Նա գտնում է, որ դեղանյութերի, հատկապես անտիբիոտիկների օգտագործումը պրոֆիլակտիկ նպատակով անհրաժեշտ է հնարավոր չափով կրճատել, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ բացառել։

Նշելով դեղաբույսերի կիրառման մատչելիությունը, նրանց ձեռքբերման հեշտ պայմանները, տեղին է ասել, որ մասնագետների, հատկապես բժիշկների մեծ մասը չի ճանաչում դրանք, ուստի և բնակչության ուսուցումը այդ տեսակետից պետք է համարել անբավարար։ Պետք է նշել, որ դեղաբույսերի ճանաչման և ուսումնասիրման հարցը ավելի հրատապ է դառնում տոքսիկոլոգիական տեսակետից, երբ շտապ բուժօգնության միակ հաջողությունը կախված է լինում տվյալ թունավոր բույսի բաղադրությունն իմանալուց և համապատասխան հակազդող դեղամիջոցը ժամանակին կիրառելուց։ Իսկ նման բույսերով հարուստ է մեր շրջապատը։ Մեր կարծիքով՝ դեղաբույսերի, հատկապես նրանց թունավոր տեսակների ուսուցումը բուժական անձնակազմին և մասսաներին պետք է դնել պատշաճ հիմքերի վրա։

Մեր նպատակն է՝ համառոտակի նկարագրել Դիլիջանի շրջակայքի առավել աչքի ընկնող մի քանի դեղաբույսեր, տալ նրանց ժողովրդական և գիտա-

կան բժշկությունների կիրառման տարածված եղանակները, ավելացնելով դրանց նաև մեր գիտապրակտիկ կիրառական փորձը։

Լորենի (Tilia cordata Mill.)։ Ժողովուրդը լորենուն անվանել է մեղրաբեր թագուհի։ Սրա մեղրը, շնորհիվ իր բացառիկ հաճելի համի, շատ բարձր է գնահատվում և ունի հանրածանոթ բուժական նշանակություն։ Մեղ մոտ լորենին ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին։ Բուժական նպատակով կիրառվում է ծառաբույսի ծաղիկը, որը հավաքվում է իր ծաղկաբույլով և կոթունով, չորացվում հով տեղում և պահվում հերմետիկ փակվող տուփի մեջ։ Ծաղիկը պարունակում է եթերային յուղ, լորձանյութեր, դաբաղիչ և շաքարային նյութեր, քրտնաբեր գլյուկոզիդ։

ՍՍՀՄ առողջապահության մինիստրության գիտական խորհրդի դեղագործական կոմիտեն հաստատել է լորենու ծաղկի բուժիչ արդյունավետ ներգործությունը մի շարք բորբոքային հիվանդությունների (գրիպ, վերին շնչուղիների կատառ, սուր բրոնխիտ, թոքաբորբեր և այլն) ժամանակ, որպես քրտնաբեր և ջերմն իջեցնող միջոց։ Մենք գործնականում հիվանդների մոտ բազմիցս ստացել ենք ցանկալի արդյունք, կիրառելով Դիլիջանի անտառների լորենու ծաղիկը։ Մենք համոզվել ենք, որ լորենու ծաղկից պատրաստված թեյը ոչ միայն քրտնամուղ է, այլև միզամուղ։ Հավանական է, որ բարձր ջերմի պայմաններում քրտնքի և մեզի միջոցով լորենու թեյը օրգանիզմից դուրս բերելով էկզո- և էնդոտոքսինները, դրանով իսկ բարերար ազդեցություն է գործում հիվանդության ընթացքի վրա։ Մեր տվյալների համաձայն, լորենու ծաղկի բուժական ազդեցությունը ավելի է մեծանում, երբ այն զուգորդվում է անտիպիրետիկ և հակաբորբոքիչ այլ դեղանյութերի հետ։ Օգտագործման եղանակը հետևյալն է. մեկ ճաշի գդալ մանրացված ծաղիկը լցնում են 1—2 բաժակ եռման ջրի մեջ, թողնում 20 րոպե, քամում թանզիֆով, հովացնում և ընդունում օրվա ընթացքում։ Ինչպես դեղատներում, այնպես էլ ժողովրդական բժշկության մեջ լորենու ծաղիկը հաճախ զուգակցվում է այլ դեղաբույսերի՝ աղնվամորու, կաղնու տերևների, երիցուկի, սև թանթրվենու, խոնդատի և ուրիշների հետ, որոնք ավելի են ուժեղացնում լորենու բուժական հատկությունները։ Ըստ Մ. Ա. Նոսալի [10], լորենու ծաղկի եփուկը բարորակ է անդրադառնում մի շարք ստամոքսա-աղիքային հիվանդությունների ժամանակ, առաջ բերելով ցավերի վերացում, բորբոքային երևույթների պակասում և այլն։ Հերտվիգի տվյալներով՝ լորենու ծաղկի ազդեցությունը ավելի շոշափելի է դառնում, երբ նրա եփուկին ավելացվում է լորենու մեղր [1]։

Ուրց (Thymus serpyllum L.)։ Ուրցը արևշատ, անտառամերձ լեռնալանջերի բույս է, բնորոշ իր դուրեկան համով ու հոտով։ Այն իր մեջ պարունակում է հոտավետ եթերային յուղեր, սպիրտային, դաբաղիչ և դառը նյութեր, խեժ, ճարպ, յուրահատուկ պիգմենտ և հանքային աղեր։ Որպես դեղաբույս, ուրցը օգտագործվել է դեռ Գալենի և Ավիցեննայի կողմից՝ մարսողական տրակտի հիվանդությունների ժամանակ։ Ուրցը հավաքում են մայիս ամսից, երբ նա սկսում է ծաղկել, մինչև ուշ աշուն։ Դեղորայքի նպատակով պիտանի է ամբողջ բույսի վերգետնյա հատվածը։ Այն քաղում ու չորացնում են հով տեղում, հետո փշրում են, հեռացնելով կոշտ, ցողունային մասերը։ Ուրցը կազմում է պերտուսին պատրաստուկի բաղկացուցիչ մասերից մեկը, կիրառվելով մանկական պրակտիկայում որպես հազը հանգստացնող միջոց։ Ուրցից պատրաստված եփուկը՝ 10—15 գ չոր, փշրված դեղաբույսը մեկ լիտր ջրում 30 ր-

պե եռացնելուց հետո, օգտագործվում է խմելու ձևով, մեկական ճաշի գդալ, օրական 3 անգամ, վատ ախորժակի և փորի բքնածության ժամանակ։ Մեր տվյալներով պարզված է, որ ուրցի վերոհիշյալ դեղաչափը, 3—4 շաբաթ օգտագործելու պայմաններում, բարորակ է ներգործում թերսեկրետոր բնույթի գաստրիտների ժամանակ, առաջ բերելով ստամոքսահյութի ժամային լարվածության մեծացում, հիվանդի սուբյեկտիվ վիճակի բարելավում։ Ըստ Նոսալի [10] ուրցը օժտված է նաև միզամուղ հատկությամբ, այն որոշ չափով թեթևացնում է ցավերը գոտկա-սրբանային ռադիկուլիտի և նևրիտների ժամանակ։ Ա. Էրտելը և Է. Բաուերը (պիտ. Ն. Պ. Բորիշից [1] ուրցին վերագրում են նաև որդամուղ հատկություն։

Սրտախոտ (Leonurus villosus Desf.)։ Հանրածանոթ դեղաբույս է, տարածված ամենուր։ Բուժական նպատակով կիրառվում է բույսի ամբողջ վերգետնյա մասը։ Հավաքում են ծաղկման շրջանում, չորացնում են հով պայմաններում և պահում թղթով փաթաթված վիճակում։ Սրտախոտը պարունակում է մի շարք ալկալոիդներ, մեծ քանակությամբ դաբաղիչ նյութեր և որոշ քանակությամբ եթերային յուղեր։ Մ. Ա. Նոսալի [10] տվյալներով, դեղաբույսը դրականապես է ներգործում աղիների բորբոքումների ժամանակ։ Որպես նյարդային համակարգը հանգստացնող դեղաբույս, սրտախոտը ոչ միայն ետ չի մնում հանրածանոթ կատվախոտից, այլև որոշ դեպքերում իր ազդեցությամբ գերազանցում է նրան։ Ակադ. Լ. Ա. Հովհաննիսյանի տվյալներով [2], սրտախոտի դեղատնային ոգեթուրմը դրականապես է անդրադառնում սիրտ-անոթային համակարգի նևրոզով տառապող հիվանդների ընդհանուր վիճակի վրա, առաջ բերելով սրտի զարկերի նորմալացում, քնի կանոնավորում, տրամադրության բարձրացում, վախի, վերջույթների դողի, մարմնի տաքացման և այլ անախորժ զգացումների վերացում և այլն։ Վերջին տարիներում ապացուցվել է դեղաբույսի բարորակ ներգործությունը հիպերտոնիկ հիվանդության սկզբնական ձևերի վրա։ Մեր տվյալներով, ամբուլատոր կարգով բուժվող հիպերտոնիկ հիվանդների մեծ մասի մոտ սրտախոտի ոգեթուրմը նորմալացրել է արյան ճնշումը, նկատվել է գլխացավերի մեղմացում, աշխատունակության վերականգնում։ Որոշ դեպքերում սրտախոտը մենք գուգորդել ենք սվնու ծաղիկների հետ, 40-ական գ չոր դեղամիջոցները լցնելով 1 լ եռման ջրի մեջ, խառնել ենք, թողել 30 րոպե, ապա քամել։ Հիպերտոնիկ հիվանդները այս խառնուրդն ընդունել են 100-ական գ, օրական 3—4 անգամ։ Ստացվել են առավել շոշափելի տվյալներ։ Այս խառնուրդը լավ արդյունք է տվել նաև կրծքային հեղձուկի ժամանակ, առաջ բերելով սրտի շրջանում անախորժ զգացումների վերացում։

Հազարտերևուկ (Achillea mille folium L.)։ Հանրահայտ տարածված դեղաբույս է, հաճելի եթերային բույրով։ Բուժական նպատակով օգտագործվում է բույսի ամբողջ վերգետնյա մասը։ Հավաքումը կատարվում է ծաղկման ժամանակ, որը տեղի է ունենում ամառվա ամիսներին։ Հազարտերևուկը լինում է սպիտակ և դեղին ծաղիկներով, բուժական նշանակություն ունի միայն սպիտակ տեսակը։

Դեղաբույսը հնուց ի վեր ժողովրդական բժշկության մեջ կիրառվել է որպես արյունահոսությունը կանգնեցնող և վերքերը բուժող միջոց։ XVIII—XIX դարերում դեղաբույսը լայնորեն կիրառվել է թոքային, ոսկրային, ստամոքսային, աղիքային, քթային, արգանդային արյունահոսությունների

ժամանակ։ Հազարտերևուկից ստացված հյութը, խառնված նույն քանակությամբ մեղրի հետ, ներքին ընդունման ձևով լավացնում է ախորժակը։ Նույն հյութը թրջոցների ձևով շուտ ապաքինում է կտրված և թարախակալված վերքերը։

Մ. Ն. Վարլակովի [5] կողմից ճագարների վրա կատարված փորձարարական աշխատանքները ցույց են տվել, որ դեղաբույսը իրոք օժտված է հեմոստատիկ հատկությամբ։ Նույն բանը մանկաբարձա-գինեկոլոգիական պրակտիկայում հաստատվել է Տրիֆոնովայի [14] կողմից։ Այս նպատակով էլ հազարտերևուկը այժմ դեղատներում բաց է թողնվում ջրաթուրմի կամ ջրիկ մզվածքի ձևով։ Որպես ախորժակաբեր թեյ, դեղատներում դարձյալ կարելի է հանդիպել հազարտերևուկին՝ 2։8 հարաբերությամբ խառնված մեր հանդերում շատ տարածված օշինդրի հետ։

Սրոհունդ (Hypericum perforatum L.)։ Որպես դեղաբույս, սրոհունդը քաջ հայտնի է եղել հայ անվանի բժշկագետներ Մխիթար Հերացուն և Ամիրդովլաթին։ Դեղաբույսը պարունակում է դաբաղիչ նյութեր, գլյուկոզիդներ, ազուլեն, եթերային յուղեր, կարոտին և այլն։ Օգտագործման համար այն հավաքում են հուլիս-օգոստոս ամիսներին, կտրելով ամբողջ վերգետնյա մասը։ Սրոհունդը օգտագործվում է լյարդի և լեղապարկի հիվանդությունների ժամանակ։ Չորացրած բույսից 4 ճաշի գդալ երեկոյան լցնում են 1լ ջրի մեջ, թողնում մինչև առավոտ, հետո եռացնում 7--10 րոպե, հովացնում և եփուկը քամելով բաժանում են 4 մասի, խմում մեկ շաբաթվա ընթացքում։ Նույն խառնուրդը օգտագործվում է նաև երիկամային սուր և խրոնիկական անբավարարությունների ժամանակ, ինչպես նաև խուխամուղ՝ շնչական սիստեմի մի շարք հիվանդությունների ժամանակ, որոնք ուղեկցվում են չոր հազով։ Խրոնիկական գաստրիտների պայմաններում մենք լավ արդյունք ենք ստացել սրոհունդի վերոհիշյալ դոզաներից, բուժումը շարունակելով 3—4 շաբաթ։ Հիվանդների սուբյեկտիվ վիճակի թեթևացումը զուգորդվել է ստամոքսահյութի որոշ ցուցանիշների կանոնավորման հետ։ Սրոհունդը ներքին լվացումների ձևով, որպես լավ ախտահանող և հակաբորբոքիչ միջոց, իր կիրառումն է գտել կանացի մի շարք հիվանդությունների բուժման պրակտիկայում։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ սրոհունդից ստացված անտիբիոտիկ իմանինը ունի արտահայտված անտիսեպտիկ հատկություն և հաջողությամբ կիրառվում է վիրաբուժական օթոռինոլարինգոլոգիայում [8]։ Սրոհունդը բարորակ ազդեցություն է թողնում նաև երկարատև արյունային լուծերի դեպքում, վերացնում է բերանի վատ հոտը, բերանի խոռոչի բորբոքումները։ Այն օժտված է նաև ուժեղ ֆոտոսենսիբիլիզացնող հատկությամբ [7]։

Եզան լեզու (Plantago major L.)։ Բազմամյա վայրի խոտաբույս է, լայնորեն հայտնի բնակչությանը։ Բուժական նպատակով տարբերում են 3 տեսակներ՝ մեծ, միջին և նշտարաձև եզան լեզուներ։ Ավելի լայն կիրառում ունի մեծ եզան լեզուն։ Օգտագործման համար հիմնականում կիրառվում են բույսի տերևները, որոնք կարելի է հավաքել ամբողջ ամառվա ընթացքում։ Հետազոտությունները պարզել են, որ եզան լեզվի եփուկը հուսալի միջոց է ստամոքսի հիվանդությունների բուժման համար։ Ըստ Վ. Ա. Շևելևի [16] տվյալների, եզան լեզվից պատրաստված հյութը արդյունավետ կերպով է ներգործում ախիլիկ գաստրիտների դեպքում, առաջ բերելով ստամոքսահյութի կանոնավորում, բորբոքային երևույթների վերացում։ Մեր տվյալներով, եզան

լեզվից պատրաստված եփուկը (50—60 գ թարմ տերևները կես ժամ եռացնում 1 լ ջրում) օգտագործելով մեկական թեյի բաժակ, գոլ վիճակում, օրական 4 անգամ, լավ է ազդում ոչ միայն խրոնիկական թերսեկրետոր գաստրիտների, այլև խրոնիկական կոլիտների դեպքում, առաջ բերելով փորկապության վերացում, աղիների կծկողական ցավերի մեղմացում, հիվանդի ընդհանուր վիճակի կանոնավորում։ Դեղատներում բաց են թողնում եղան լեզվի սպիրտային լուծույթը և պլանտոգլյուցիտ պատրաստուկը։ Վերջին տարիներում բացահայտվել է եղան լեզվի խուխամուղ և հազը հանգստացնող հատկությունը։ Դրա համար էլ այն առաջարկվում է շնչուղիների հիվանդությունների ժամանակ։ Համաձայն Մոնաստիրսկայայի և Պետրոպավլովսկայայի [9] տվյալների, եղան լեզուն արտաքին կիրառման ձևով օժտված է նաև արյունահոսությունը դադարեցնող և մաշկային թարախային վերքերը բուժող հատկություններով։

Ալոճենի կամ սգնի (Crataegus oxyacantha L.)։ Բավականաչափ տարածված է Դիլիջանի անտառներում։ Որպես դեղամիջոց կիրառվում են բույսի ծաղիկը, տերևները և պտուղը։ Ծաղիկները հավաքում են դեռ լրիվ չբացված վիճակում, ամբողջ ծաղկաբույլով, չորացնում հով տեղում և պահում տուփի մեջ։ Այն օգտագործվում է սրտային հիվանդությունների ժամանակ, հատկապես անգիոնևրոզների դեպքում։ Այս նպատակով 3 բաժակ եռացրած ջրին ավելացնում են 3 ճաշի գդալ ծաղկաբույլ, թողնում են մեկ ժամ հովանա և քամված եփուկը խմում են օրվա մեջ, 3 անգամ, մեկական բաժակ, 2—3 շաբաթ տևողությամբ։ Մեր տվյալներով, այսպիսի բուժումը նման հիվանդների մոտ առաջ է բերել սրտի շրջանի անախորժ զգացումների վերացում, սրտի ռիթմի կանոնավորում, քնի նորմալացում։ Դեղատներում բաց են թողնում պտղից պատրաստված մզվածքը և ոգեթուրմը, որոնք արդյունավետ ներգործություն ունեն արյան ճնշման վրա հիպերտոնիկ հիվանդության I և II աստիճանների ժամանակ։ Այդ են վկայում Պոդգուրսկու [11], Ջերնիշևի]15], ինչպես նաև մեր կողմից կատարված հետազոտությունները։ Համաձայն մեր տվյալների, ալոճենու դեղանյութերը, զուգակցված սրտային գլյուկոզիդների հետ, բարորակ են ներգործում ոչ միայն սրտի ֆունկցիոնալ, այլև օրգանական բնույթի հիվանդությունների ժամանակ։

Դիլիջանի քաղաքային հիվանդանոց *Ստացված է 4. X. 1968 թ*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խորիշ Ն. Պ. Մեղրի և մեղվի բուժական հատկությունները։ Հայպետհրատ, Երևան, 1960։
2. Հովհաննիսյան Լ. Ա. Ներքին հիվանդությունների մասնավոր ախտաբանությունը։ ՀՍՍՀ գիտ. Ակադ. հրատ., 1956։
3. Арутюнов В. Я. В кн.: Очерки по неотложной терапевтической помощи, 111, М., 1958.
4. Билибин А. Ф. В кн.: Химиотерапия инфекционных болезней. М., 1958.
5. Варлаков М. Н. Бюллетень НИХФИ, 4—5, 1941.
6. Вотчал Б. Е. Очерки клинической фармакологии. Госизд. мед. литературы, 1963.
7. Землинский С. Е. Лекарственные растения СССР, Медгиз, 1958.
8. Королев М. Ф. Вестник оториноларингологии. 20, 1, 87, 1958.
9. Монастырская Б. И. и Петропавловская А. А. Фармакология и токсикология, 2, 30, 1953.

10. Носаль М. А., Носаль И. М. Лекарственные растения и способы их применения в народе. Госмедиздат УССР, 1958.
11. Подгурский В. В. Фармакология и токсикология. 14, 2, 51, 1951.
12. Северова Е. Мед. газета, 68 (2751), 23, 8, 1968.
13. Тареев Е. М. Советск. медицина, 3, 3, 1955.
14. Трифонова А. Т. Акушер. и гинеколог. 32, 4, 61, 1956.
15. Чернышев Г. Е. Советск. медицина, 1, 35, 1954.
16. Шевелев В. А. Аптечное дело, 8, 6, 70, 1959.
17. Hloucal L. Cas lek. ces. 105, 6, 151—155, 1966.
18. Wintrobe M. M. a. Cartwright G. E. Arch. intern. Med. v. 98, p. 559, 1956